

L

ԹԷՈՂՈՍԻ ՎԱՆՔԸ, ԱՆՈՐ ՀԱՅԱԶԳԻ ՎԱՆԱՀԱՅՐԸ,
ԵՒ ԻՒՐԱԿԵՐՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Թէոդոսի վանքին տեղագրութիւնը .

Ինչպէս ակնարկած ենք մեր նախընթաց տողերուն մէջ, Մար-Սաբայի մեր ուղեորութեան առթիւ, հանդիպեցանք նաեւ Աբբա Թէոդոսի վանքը, Մար-Ստրայէն դէպ արեւմուտք վեց քիլոմէթր, իսկ Բեթղեհէմէն նոյն չափ հեռի կը գտնուի դէպ ի արեւելք: Մար-Սաբայի գառիվերէն 10-20 վայրկեան յետոյ, ուղեորը կարող կ'ըլլայ տեսնել Թէոդոսի վանքը, շինուած արդարեւ սարահարթի մը վրայ, հիանալի դիրքով մը և ակնապարար տեսարաններով: Վանքին սարահարթէն՝ աչաց առջև, գեղեցկօրէն կը պարզուի Մեռեալ Ծովը: Եթէ Մար-Ստրան հաստահիմն շէնքերու խոր վիրապի մը դիրքն ունի, ընդհակառակն Թէոդոսի վանքը գեղազարդ ծաղկաբլուրի մը հմայքը կ'ընծայէ: Վանքին շուրջը գտնուած ընդարձակ բացաստունը եւ այլ տեղագրական գեղեցկութիւններ ճշդօրէն կ'արդարացնեն բոցակիզեալ խորհրդաւոր խնկամանի մը սիրուն գրոյցը, որուն համաձայն, Աբբա Թէոդոս ընտրած է իր շինելիք վանքին տեղը, իրաւի խունկով ու մոմով փնտռուած վայր մը: Դժուարին վերելքներէն պարտասած ուղեորին համար, ան յարմարագոյն վանքն է, ուր կրնայ գտնել հանգիստ և կազդոյր: Վանքին այժմու շէնքերը արժէք մը չեն ներկայացներ, թէև յայտնի է որ բազմաթիւ ուխտաւորներ եւ վանականներ պարունակող շէնքերու հիմեր ղեռ կ'երեւան: Վանքին արտաքին ղռնէն ղուրս, դէպ ի Բեթղեհէմ տանող ճանապարհի մուտքը ունի գեղեցիկ ծառուղի մը, և սակաւաթիւ պարտէզներ զարգարանքն են այս վանքին. պատերազմէն յառաջ նորոգութիւն մը սկսուած է, բայց կէս մնացած, և այժմ